600.0116.12.04.23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ապրիլի 2023 թվականի №116-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի N56-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի փետրվարի 9-ի «Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում կարգավորվող անձանց նկատմամբ հսկողության փոխանցումը համաձայնեցնելու կարգը սահմանելու մասին» N56-Ն որոշման 1-ին կետով սահմանված՝ էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում կարգավորվող անձանց նկատմամբ հսկողության փոխանցումը համաձայնեցնելու կարգում (այսուհետ՝ Կարգ) կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունը.

   1) Կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ 15.1-15.3-րդ կետերով.

   «15.1 Ազգային անվտանգության կամ պետական շահերից ելնելով՝ կարգավորվող անձից կարող են պահանջվել լրացուցիչ տեղեկություններ (փաստաթղթեր): Հանձնաժողովը, սույն կետում նշված լրացուցիչ տեղեկությունների (փաստաթղթեր) ներկայացման անհրաժեշտության վերաբերյալ գրությամբ տեղեկացվելուց հետո, հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր տեղեկացնում է կարգավորվող անձին և վերջինիս կողմից նշված տեղեկություններն ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է իրավասու մարմնին:

15.2 Իրավասու մարմինը, սույն կարգի 15.1-ին կետին համապատասխան տեղեկությունները (փաստաթղթերը) ստանալուց հետո երեսուն աշխատանքային օրվա ընթացքում հայտի վերաբերյալ դիրքորոշումն ուղարկում է հանձնաժողով:

15.3 Սույն կարգի 15.1-ին կետով նախատեսված դեպքում սույն կարգի 17-րդ կետով սահմանված ժամկետը կասեցվում է մինչև սույն կարգի 15.2-րդ կետի համաձայն հանձնաժողովին իրավասու մարմնի վերջնական դիրքորոշում ներկայացնելը, իսկ չներկայացնելու դեպքում՝ մինչև նույն կետում նշված ժամկետի ավարտը:»,

2) Կարգի 16-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«16. Իրավասու մարմնի դիրքորոշումը սույն կարգի 15-րդ կամ 15.2-րդ կետերով սահմանված ժամկետներում չներկայացվելու դեպքում այն համարվում է դրական:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք.Երևան
12 ապրիլի 2023 թ.